26. ԷՐԿՈՒ Հ'ԸՆԿԵՐ

Կէղնին չէղնին էրկու մարդ կէղնին։ Էդ մարդիկ շատ աղքատ կէղնին, ու պարտքընտեր։ Հ'ըմնօր պարտքընտերներ գիգան կխեղդին ըտոնց, ուրանց հախ կուղին. էդոնք լե չունին օր տան։

Իրարու հետ խոսքեր ուրանց կէնին մեկ, կէլնին փախնին, կէրթան խարիբութեն։

Կէրթան քաղաք մի, կելնին դուրս, կէրթան էդ թագավորի խաներու մեջ հ'օդե մի կքրին կմնան ուրանց։

Ավուր մեկ, թագավոր կիմնա էդոնց էդ տեխ էղնել։ Ըդընցնե մեկ կկանչե, կըսե.—Դուք ի՞նչ մարդ եք, էկեր եք իմ խաներու մեջ կմնաք, կէրևա դուք գեղ մարդ իք։

Կըսեն.—Ջա՛նըմ, ի՞նչ գեղ մարդ ինք, մենք ֆըլան էրկրեն ինք, պարտքընտեր ինք, մեր պարտքի տերեր լազաթ չիտեն մըզի, հ'ելանք փախանք էկանք հ'ուդա, օր դատինք տանինք տանք մեր պարտքընտերերուն։

Թագավոր էդ մարթուն կըսե.—Շատ աղեկ, օր դու օղորդ կըսիս, ես քու պարտք իտամ, տանիս տաս քու պարտքի տիրոջ, դու կըռնա՞ս ապրիս։

Մարդն կըսե.—Շատ աղեկ կապրիմ, օր իմ պարտք տամ։

Թագավոր կըսե էդ մարդուն.—Ամա դինա՞ս, օր քըզիկ մեկ տամ, քու հ'ընկերոջ էրկու խաթ կիտամ, դու չըս նեղենա՞։

Մարդ կըսե.—Թագավոր սաղ մնա, էրկու կիտաս, իրեք կիտաս, հ'ընչի՞ս է պետք, դու իմ պարտք տուր, ընտոր ի՞նչ կիտաս, դու գինաս։

Մարդուն կըսե.—Դը, դու գնա։

Մարդն օր կէրթա, էս հեղ մեկել հ'ընկեր կկանչե, բերե թագավոր։

Կըսե.— Դու ինչ մարդ իս, էկեր իս իմ խաներու մեջ կմնաս, ընձի հըմալ կէրևա դու գեշ մարդ իս։

Մարդն կըսե.— Թագավոր ապրած կենա, ես ի՞նչ գեշ մարդ իմ, ֆուխարա մարգմ իմ, պարաքընտերներու ձեռք չկեռցա քաշի, հ'ելա էկա էդա տեխ, օր աշխատիմ, տանիմ իմ պարտքընտերերուն իտամ, ես ֆըլան էրկրեն եմ։

Թագավոր կըսե.—Շատ աղեկ, օր դու օղորդ կըսիս, էկո ղքու պարտք կիտամ, հ'ելի գնա քու էրկիր, հալբաթ օր պարտքից ազատիս, կապրիս, աղեկ գեջ։

Մարդն կըսե.—Հա՛, վոլլահի, օր պարտք չէղնի վրես, աղեկ, գեշ կապրիմ։

Թագավոր կըսե.—Դու պետք է դինաս, օր քըզիկ մեկ տամ, քու հ'ընկերոջ էրկու խաթ կիտամ, դու ըռազի՞ իս։

Էդ մարդ կվերցու, կըսե.—Իմ մեկ աչք հանե, թաքիլա իմ հ'ընկերոջ էրկու խաթ մի՛ տա։

Թագավոր կըսե.—Շատ աղեկ, գնա քու տեխ։

Կմնա ժուկ ու ժամանակ մի, մեկ լե էդ մարդ կկանչե, կըսե.— Դինա՞ս ը քըզիկ մեկ իտամ, քու հ'ընկերոջ էրկու խաթ կիտամ։

Մարդ կըսե.—Իմ աչք հանե, թաքիլա իմ հ'ընկերոջ ընծնե հ'ելել մի տա։

Թագավոր մեկ լե կըսե.—Գնա քու տեխ։

Մարդ կէրթա։ Կմնա ժուկ ու ժամանակ մի, մեկ լե կկանչե, մարդ ուր հ'առջի ըսած կըսե։

Թագավորի ճար կկտրի, կբերե էդ մարդու աչք կհանե, մեկել հ'ընկերոջ պարտքն ու էրկու խաթ խարճըլըղ կիդա, կճամբե ուրանց էրկիր։

Կելնին, էրկուս լե գիգան ուրանց էրկիր։ Ճամբեն իրարու ռաստ կիգան, կճանչնան իրար։ Էն, օր փարեն առեր է, կտեսնա էդա ուր հ'ընկեր, ամա մեկ աչք չկա, կհարցու, կըսե.—Ա՛խպեր, էդ քու աչք ի՞նչ է էղի։

Իմալ օր մենք պատմինք, հըմալ ուր գլխու դալած կպատմե ուր հ'ընկերոջ։

Հ'ընկեր կհարցու, կըսե.—Ըպա իդա փարեք, հ'ո՞ւստ է քըզիկ։—Էն լե ուր գլխու գալած կպատմե, ու կդառնա հ'ընկերոջ կըսե.—Աստված քու տուն ավիրե իմալ ավիրեր է. դու չըս գինա, դու լե թըղ ըսեր՝ «Կիտաս՝ տուր, իմ ինչո՞ւս պետքն է»։

Փոռ ու փոշման կթորկե, գիգա ուր տուն։ Հ'ընկեր կբերե համ զուր պարտք կիդա, համ տուն ու տեխ կդնե, կնստի կուտե ու կխմե։